Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2020 թվականի N - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շար-քային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2020 թվականի մարտի 20-ից մինչև հունիսի 20-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղա-քացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավվել ընդհանուր թվով 374 քաղաքացու, որոնցից 233–ը՝ շարքային կազմի, 44-ը՝ ենթասպայական կազմի, 97-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:
4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով՝ 57 պահեստազորային՝ 2020 թվականի մարտի 20 - 29-ը ներառյալ, 9 պահեստազորային՝ 2020 թվականի ապրիլի 6 - 12-ը ներառյալ,

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով՝ 144 պահեստազորային՝ 2020 թվականի ապրիլի 7 - 13-ը ներառյալ, 45 պահեստազորային՝ 2020

թվականի ապրիլի 13 - 22-ը ներառյալ,

3) հետախուզական մասնագիտություններով` 32 պահեստազորային` 2020 թվականի մարտի 20 - 29-ը ներառյալ, 10 պահեստազորային` 2020 թվականի մայիսի 5 - 11-ը ներառյալ, 10 պահեստազորային` 2020 թվականի մայիսի 20 - 29-ը ներառյալ,

4) ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագիտություններով` 14 պահեստազորային` 2020 թվականի մարտի 20 - 26-ը ներառյալ,

5) ինժեներական մասնագիտություններով` 24 պահեստազորային` 2020 թվականի հունիսի 1 - 7-ը ներառյալ,

6) թիկունքային մասնագիտություններով` 22 պահեստազորային` 2020 թվականի ապրիլի 13 - 19-ը ներառյալ,

7) տեղագրական մասնագիտություններով` 7 պահեստազորային` 2020 թվականի մայիսի 11 - 20-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020թ.

Երևան